ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տելեկոմ Արմենիա» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան 0014, Ազատության պող.24/1,
Հեռ.՝ (+37410) 410410
էլ. փոստ՝ info@telecomarmenia.am

Հաշվետվություն թիվ 4, 30.09.2024

Ստորև ներկայացվում են դատական գործերի վերաբերյալ էական փոփոխությունները 30.09.2024թ. դրությամբ.՝ ի լրումն 30.06.2024թ. թիվ 3 հաշվետվության և Ազդագրի.

1. Թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.01.2024թ. որոշման անբարենպաստ մասի դեմ պատասխանող ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, երրորդ անձինք՝ Հայկ Հովիկի Եսայանի, Ալեքսանդր Հովիկի Եսայանի վճռաբեկ բողոքների ընդունումը ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2024թ. որոշումներով մերժվել են, իսկ երրորդ անձ «Թիմ» ՓԲԸ վճռաբեկ բողոքի ընդունումը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2024թ. որոշմամբ:

   ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.01.2024թ. որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

   ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը 20.08.2024թ. կայացրել է «ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով 2023 թվականի մայիսի 11-ի վճիռը կատարելու մասին» թիվ 490-Ա որոշումը, որով որոշել է. «1. Կատարել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով 2024 թվականի մայիսի 11-ի վճիռը: 2. «ԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերությանը տալ նախազգուշացում»: «Թիմ» ՓԲԸ օրենքով սահմանված կարգով 09.09.2024թ.-ին վարչական կարգով բողոքարկել է ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նշված որոշումը:

   «Թիմ» ՓԲԸ 13.08.2024թ.-ին անհատական դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան (թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.01.2024թ. որոշման կապակցությամբ), որը ՀՀ սահմանադրական դատարանի 29.08.2024թ. որոշմամբ ընդունվել է քննության (հասանելի է հետևյալ հղումով՝ https://concourt.am/decision/decisions/66d565fe7d13b_SDDKV-43.pdf):